46. ԲԸԼԵԼ ԱՂՋԻԿ

Կըլլի, չըլլի վախտին թագավոր մի կըլլի, թագավորը կը վախճանի, տղան տասնըհինգ տարվա տղա է, տեղը կը նստի:

Ավուր մեկը կէլլա, կէրթա լեառը ավը. մի էղնար* կը զինե, հինգ հատ կաքավ. մեկալ օրը կէրթա՝ ճեյրան մի, էրկու կաքավ. մեկալ օրը պոշ կուգա:

Վեզիր կըսը թե՝ «էադ դին մ'էրթըր, ֆիլան ճանփով գնա»:

Մեկալ օրը էանդին կէրթա, տաս հատ կաքավ. մեկալ օրը տասը կաքավ, խումրի մի բռնեց. հաց չէր առեր, անոթցավ. էլավ լեառան գլոխը, տեսավ օ՝ թյուրքմեններուն չադրնին, էրկնուց աստղերուն հսապը կա՝ չադրին չկա:

Գնըց մի չադր. անոթի էր, թազա պանիր ու սեր կերավ, էլավ, ընկավ ճանփա: Չադրին սըրա-սըրա զարկած ին. ճանփու ըսդին էալ կար, ընդին էալ կար, միջուն գնըց. քնարի չադրը կայնավ:

Չպողը լեցոց, կրակ չուներ. հայավ օ չադրին մեջ իրեք հատ աղջիկ կա, իրեքն էալ քոր ին. մենծ քորը կրակ մի բերըց, դրըց չըպղի վրա: Թագավորը հայավ, օ շատ աղկեկ աղջիկ է:

Աղջիկնը ըսըց. - Թագավորի տղին խե՛լք ըլլիր, ինձիս առներ, էանանկ չադր մի տի շինեի օ թագավորին ինչ ղտիր ագպա կար, մեջը նստիր, պարկիր, մի եանը պոշ մնըր:

Աղջիկը մտավ չադրը, տղան էալ ընկավ ճանփա:

Թագավորը մտածեց. «Աղջիկը լավ է, չադրըրս պատիհավա էկավ»:

---

* էղնար՝ էգ եղնիկ, որձին ճեյրան կասեն (ծ.բ.):

Գնը սարայ, կանչեց վեզիրը, ըսը. - Առեք էաս ալմաստ մաննին, տարեք ֆլան չադր:

Տարին, աղջիկը անցոց մատը:

Թագավորը էան մեկալ օրը, էաս հեդուն ձինը հեծավ, գնը ավը, զարկեց մի էղնար, մորթեց, կախեց կեսը ընդի եանը, կեսը՝ ընդի եանը - ձիու թերքին, գնը, չադրը էջավ:

Օրթանճա քորը էկավ ձիուն կեմը բռնեց. մենծ քորը հագվեր էր, փախավ, պեյվավ:

Թագավորը ներս ընցավ, նստավ. բերին մերդը, կարագը, էլավ էղնարին կես շախան տվեց էդոց, ընկավ ճանփա, հասավ տունը: Թոփեց գնտըլիկ գլոխնին, տոլմա ուտողնին:

- Գըցե՛ք, աղջիկը առեք, էկեք ինձի:

Գըցին, աղջիկը առան-էկան, պսակվավ:

Իրեք օր մնը աղջկա քով, կինե հեծավ, գնը ավը, իրիկունը դարձավ չադրը. էկավ օրթանճա քորը ձինը բռնեց:

Թագավորը ըսը. - Ձինը մի՛ բռներ, կրակ առ էկո:

- էջիր, դայվալթի մի՛ էրե, անտա:

- Չուզեր, կրակ մի բեր:

Կրակը բերը, դրը չպոնի վրա. թագավորը ձիուն գլոխը օլըրեց դեպի ճանփան:

Աղջիկը ըսը. - Թագավորին տղուն խելք ըլլիր՝ ինձիս կառնե, էանանկ մեկ խալի մի գործիմ, օ ինչ օր ասկեր կա, վրան նստի, մեկ թին պոշ մնա:

Թագավորի տղան շատ մտածեց. «Շատ աղկեկ աղջիկ է, խալիչան էալ պատիհավա էկավ»:

Մընը մի տարի ժամանակ. հա էսօր չադրը կը գործեն, հա էգուց խալին կը գործեն. իրիկունը պարկավ, սուլթաններուն կանչեց. - Մեկդ մեկ քովս, մեկդ մեկել քովս պարկեք, ձիզի բան տի ըսիմ:

- Դուք օ չադր, խալի տի գործեիք, ի՞նչ էղավ:

Էրկու քորն էալ ըսին. - Մեք քիզի չխափեաք նա՝ դու մեզ կառնեի՞ր:

Քովվաննուն էլավ, քեն ըրեց, գնը իրան տեղը պարկավ:

Պաշլայեց՝ ավը կէրթա-կուգա, վուրուլմիշ էղած է ավի, աղջներուն քովը չպարկիր:

Ավուր մեկը կինե էան լեառը գնը. զարկեց մի էղնար, իրեք հատ կաքավ, գնը էադ չադրը, պզտիկ աղջիկ, էկավ, ձիուն կեմը բռնեց, կրակ բերը, չպոդը խմեց, ձիուն գլոխը օլրը դեպի ճանփան:

Պզտիկ աղջիկը ըսըց. - Թագավորի տղին խելք ըլլիր նե՝ ինձիս կառներ, էանակ մեկ տղա մի, մեկ աղջիկ մի բերիմ. օ ինճի-տիշլի, սըրմասաչլի, ղալեմ-ղաշլի, ինձնե պեյլու:

Թագավորին չըպղի կրակը ընկավ, ծինը կայնեցոց. աղջիկը ինքիզինք բացեց, վազեց, հովը վրու չիթը տարավ, տղան տեսավ՝ օ աղջիկը ուզածին պես շատ աղկեկ է. տղուն խելքը անցավ, աչքը մթնտեց, ընկավ:

Աղջիկը բերըց պաղ ջուր մի լցեց սրտին վրա, խելքը գլոխը էկավ, ծինը քշեց, գնըց սարայը:

Թուփեց գնտըլիկ գլոխնին հոնի* ըսըց. - Չիզի բերած իմ, օ եաս էրկու կնիկը թող տամ, էան մեկալ քորվընին բերիմ:

- Կանոնը էդի չէ, էան կուզիս նե՝ բեր, ըդոք թող մնըն, - ըսին թագավորին:

Թագավորը մարդ ճանփեց, գընցին էան աղջիկը բերին, պսակեցին: Ինանը ամիս ժամանակ սուլթանը ըսածին պես բերըց մեկ տղա, մեկ աղջիկ:

Սուլթանը ցավ կը քաշեր, էրկու քոր իրարու հետ խոսացին: Մենծ քորն ըսըց. - Մեք սուտ էլաք թագավորի քով, էաս մեր պզտի քորը իրավ էլավ:

Մենծ քորը ըսըց. - Ես ըդոր չարան կը գտնըմ:

Կանչեց պառապի մի ըսըց. - էրկու հատ շան լակոտ գնա առ, էկո:

Մի սնտուկ հազրեցին, փեշ մի օսկի պառապին տվին: Պզտիկ սուլթան օ տղա մի ու աղջիկ մի բերըց, վերուցին տկուն, շան լակոտին դրին տակը, սուլթանը ցավու զոռուն չգիտցավ:

Խապար ճանփեցին թագավորին. «Թագավոր ապրած, աչքդ լոս, սուլթանը պարկավ»:

Տասը մարդ միվժտե բերըց:

Թագավորը ըսըց. - Վեզիր ու նազիր, գալողը կըսը՝ «պարկավ», աղջիկ է, տղա է, հեչ իմաց չիք ըլլիր:

Մի խելոք տղա ճանփեցին, խապար առան, օ շան լակոտ է:

Թագավորը խելոք մարդոց հարցոց. - Մարդն էալ հեչ շան լակոտ կը բերե. գրավոր քննութինը, բան մի կա, իմաց էղեք:

Շատ քննութին բացին, չկրցան գննային:

Թագավորը ըսըց. - Տարեք, դրեք սուլթանին եոթ ճանփուն չաթը, ցից մի զարկեք, զենճիլով կապեցեք, գոմշու կաշի մ'էլ վրան գցեցեք,

---

* Մենծ ու պստիկ տղանին, թուրք. (ծ.ա.):

փետե ծայրը թակ մի կախեցեք, դելալին ըսեցեք, թող պոռա. «Թագավորին խաբող մարդուն հալը ըսի տի ըլլի: Հեր վեվ օ կընցնի նե քովուն, մե թոխմախ էալ զինե, վրան դնե, ընցնի»:

Թագավորը էլավ գնը քովը, չպոխը լեցոց, վեզիրն էալ չախմախ զարկեց, կրակը դրը, պաշլայեցին իրար հետ զրուցիլը:

Թագավորը կճկավ, թակը առը, միջացը մի հատ զարկեց. «Թագավորը խափող մարդուն հալը ըսի տի ըլլի»:

Գալող-երթողը կուգա, կը զինե ու կերթա:

Էան մեկալ քորվընին պառապին փեշը օսկի լեցոցին, ղութին տվին ձեառքը, ըսին. - Կը տանիս, նետիս ծովը:

Տարավ նետեց. ծովի չալխաուն զարկեց, բերը քնարը: Էադ ծովուն էալ հարմար տեղ կար. քնարը ջուր էին հանած, ջաղացք շինած: Էաս սնտուկը էկավ ընկավ օլուխն ի վեար, ջաղցին պողազը, ջաղացքը կայնավ:

Ջաղցպանին էալ տղա չկար, էարիկ կնիկ ծեր մարդ էին, չուճուխ չունեին:

- Կնի՛կ, էլի դուս, ջուրը կըյրե, - ըսը:

Կնիկը էլավ կըյրեց. մարդը մտավ տոնղուզլուղը, ղութին հանեց, կնկան ըսը. - Ջուրը կապե:

Մտան ջաղացքը, դուռը կղպեցին:

- Էարիկ մարդ, էադ ի՞նչ էր մտեր ծակը, - հարցոց կնիկը:

- Սնտուկ մի գտեր իմ, ծայր է, տեսնը ի՞նչ է: Մեկ մարդ մի եա էխտիարության տովլեթ տի գընանայ, ետ ճահիլուբան, ճահիլուբան չգտաք, մեր տովլեթը էխտիարուբան էկավ:

Բացեց ղութին, հայավ օ էրկու հատ չուճուխ, իր ինճե-տիշլի, սըրմասաչլի, ղալեմ-ղաշլի, ինճե-պեյլու: Լոսը զարկեր ղութիի մեջ, անքան օ սիրուն են՝ մի աղջիկ, մի տղա:

Մարդը բերը ալիրը, մալեզ ըրեց ջրի, շեքերը ցգեց մեջը:

Օր ավուր կերածնին ընի էր, ղլավցան, էղան քոմո մենծ, որը տարով կը մենծնային, էսոք օր ավուր վրա կը մենծնային:

Ջաղցպանին կնիկը մեռավ, մնը միանակ, աղջիկը ջաղացքը կավիլե, տղան էալ ջուրը կը կապե: Ջաղցին թուճը կոյրավ, ջաղցպանը աղջիկնը, տղան թողեց, գնը քաղաք շինելու:

- Ես էալ կուգամ, պապա՛, - ըսը տղան:

- Այ որդի՛, գաս ի՞նչ տի ինիս, ծոցս հինգ փարա չկա, մի քառսուն փարա կա, թճիս տի տամ. օր չինե մարդը:

Թուճը լցեց տոպրակը, նետեց փեճը, ընկավ գնըց. տղան էալ հետը գնըց:

Թուճը շինել տվեց, ընկավ քաղաքը օլրտավ, գնըց թերզիի թյուվ-քեան կայնավ:

Տղան ըսըց. - Պապա, ըղ ձեռ լաթը ինձի առ (այն լաթը, որ կարված էր թագավորի տղուն համար):

- Այ որդի՛, հինգ փարա չունիմ օ թրաշ ըլլիմ, ինդո՞ւր ըդ լաթը քիզի տ'առնիմ:

Թերզին ըսըց. - Պապա՛, ի՞նչ կըսե տղադ:

- Ըդ ձեռք լաթը կուզե:

- էաս տղան օ լաթը կուզե, փեշկեշ կինիմ, - ըսըց, հանեց հագոց տղին:

Ընկան չարշուն ի վեար գցին, հասան աթ-բազարին:

Արաբիստանցի արաբ մի մեկ հրեղեն թայ մի բերըց. սաղ քաղքին մարդիկը թոփված ին, գինը չեն կընըր տար՝ օ առնին:

Ըս տղան ձինը տեսավ, պաշլայեց օտքը ծեծիլը:

Արաբը ըսըց. - էաս տղան վե՞րն է:

Պապն ըսըց. - Իմն է:

- Ի՞նչ է կըսը. տղադ:

- Կուլա տե, «ձինը ինձի առ» իմ քիսես հինգ փարա չկա, ըս լաթերն էալ թերզին է տված:

- Թերզին օ լաթերը տվեր է, ես էալ ձինը փեշկեշ կինեմ, էաս սաղ քաղքին ժողովուրդը օ իմ ձինը չեն կրնըր առնիր, տղին փեշկեշ է:

Տղան հեծավ ձինը, պապնը ընկավ առաջ, գըցին անցան մի խլըրչու թյուքեան, կայնան:

Տղան պապուն կանչեց. - Պապա, էադ թուրը, ղալխանը ինձի առ:

- Այ որդի՛, իմ քովը հինգ փարա չկա, վրուդ լաթը թերզին, ձինը արաբը տվեց:

Խլըրչին ըսըց. - Էնոք ձի ու լաթ պաշխիշ ըրեր ին, ես էալ թուր ու մի ղալխան պախշիշ կինիմ:

Տղան թուրը կապեց մեջքը, ղալխանը անցոց շնլին, ընկավ չարշուն ի վեար կինե կերթըն. գըցին հասան թամք շինողի թյուքեանը: Այարճին այար մի շինած է թագավորի տղուն:

Տղան ըսըց. - Պապա՛, այարը ձիուս տի առնիս:

- Այ որդի՛, քովս հինգ փարա չկա, էսոք քուլլի խալխն է պախշիշ ըրած:

- Պապա, ի՞նչ է կուզէ, - ըսըց այարծին:

- Այարը կուզե:

- Ձինը տվողը օ տուեր է, ես այար մի տամ շա՞տ է, - ըսըց, պախշիշ ըրըց տղին:

Տղան զարկեց ձիուն վրա գնըց:

Գըցին հասան մզրախին մեյտանը, տղան կայնավ հոտի, մզրախ ուզեց:

Մզրախն էալ առավ, ընկավ ճանփա:

Գըցին հասան ջաղացը, ձինը կապեց ջաղցի մե թարաֆը:

Պապը ըսըց. - Որդի, էլի ջուրը կըյրե:

Տղան ջուրը կըյրեց. պապը թուճը տեղը անցոց. ջաղցին սազը տվին: Մի ամիս ղըտր մնըց, պապը հիվնդցավ, տղան ձինը կը հեծնըր, կէրթըր ջուր ի վեր, ջուրը կը կապեր, քորն էալ ջաղցին սազը կուտար:

- Որդի՛, - ըսըց հեարը, - չե՞ս կընըր կաքավեն, ճանավարեն բան մի զիներ, բերեր:

Տղան էլավ ձինը հեծավ, շատ քիչ-գնըց, գնըց հասավ Ձմբեղու լեառը, կաքավ զարկեց, հասոց պապուն:

Պապը քեպապ ըրըց, կերավ. տղուն օրհնեց, մեռավ:

Տղան իր պապը հող ու գերեզման ըրըց:

Մնացին քոր ու աղբեար:

Տղան մեկ օր ըսըց քրոջը. - Դու հոս կեցիր, ես կէրթըմ ավը, կուգամ:

Պապերնին օ մեռավ, միվշտերին կըյրվավ, ջաղացը էղավ խարապա, ինսուզ տեղ մ'էր, էան ղըտար օ բնակարան էր: Տղան օր ավուր վրա, էալ կը հեռանար. էալ ավի վուրուլմիշ էղավ, հրեղեն ձինը տակը, ուր ըսես կէրթըր:

Մի օր Աստված չհաջողեց. ընկավ լեռե լեռ, գնըց էլավ մեկ բարս լեառան մի գլոխ, տեսավ օ մեկ ուլի օվա մի կա. օ էադ լեառան առջին է ճոթ, ճոթեղե չկա: Թագավորին քաղաքն էալ լեառան տակ է. ըստեղ մի մենծ չայիր կա, կես սահաթ էալ թագավորին սարայը կը քաշե: Սարայը բարս է, չայիրը առաջն է. լեառն ի վեար էջավ տղան. ինք ծարավ, ձինը ծարավ, չայիրի գլխու աղբրին վրա էջավ. մզրախը զարկեց հոտի, ձինը սեապեց չայիրը, ինք մզրախին շուքը պարկավ*:

Թագավորը էլավ գնըց աղբիրը, վլացվավ, ջուր խմեց, հայավ տղա մի խոտերու մեջ պարկեր է. ձինը վեարեն հրռհռաց:

---

* Տեգի պոչի ծայրն շատ մեծ փունջ բրդյա ծոպ կա (ծ.ա.):

Թագավորը ըսըց. - էաս ի՞նչ դուր մարդ է. օ էկեր է իմ չայիրը պարկեր. օձը պորտովը, ճնճուդը խանատովը իմ չայիրը մարդ չէր իգար, էաս ի՞նդուր էկեր է:

Գնըց տղին վրա, տեսավ օ քնուկ է, արև էկեր վրան, ինճի-տիշլի, սրմա-սաչլի, ղալեմ-ղաշլի, ինճե-պեյլու, աղկեկ, սիրուն տղա մի:

«էաս տղան իմը ըլլեր, մե աչքս քոռ ըլլեր», - ըսըց ինք իրան:

Տեսավ օ պտուղ-պտուղ քրտինքը կը վազե. հանեց ծոցուն աղլըղը, քրտինքը սրբեց, աղլըղը ցգեց վրան, նստավ, պաշլայեց լացը, չպողը լեցոց, չախմախը զարկեց, կրակը դրավ վրան, քաշեց ու կուլա ու կուլա:

«Իրեք հատ կնիկ առի, իրեքն էալ մե մի էասանկ տղա չբերըց»:

Թագավորը մտածոց մեջ մնըց. թե՝ «ըսի իմ տղան է»:

- Վալլա, «ինճի-տիշլի, սրմա-սաչլի, ղալեմ-ղաշլի, ինճե-պեյլու» օ կա՝ էաս է, ըսի իմ տղան է: Տեսնըք ո՞ւր կը կայնի:

Տղան արթնըցավ, էլավ նստավ, տեսավ թագավորին, սրսըփաց:

- Մի՛ վախիր, տղա՛ս, մի վախի՛ր, որդի՛, վե՞ր տեղաց զուզաս:

- Ավն էի գըցեր:

- Վե՞ր տեղաց իս:

- Արքա՛ հայր, ես էալ չիմ գիտեր:

- Որդի՛, տե՞ղդ էալ չես գիտեր, ծեր տունը վե՞ր տեղ է:

- Մեր տունը ծովուն քնարը - ջաղացքն է:

- Ի՞նչ ունիս, որդի՛:

- Մի քոր ունիմ:

- Պապ չունի՞ս:

- Պապս ծեր մարդ մ'էր, մեռավ:

- Շենլըք չկա՞, էալ տուն չկա՞ բոլորնիդ:

- Չէ, մեր տունը ջաղացքն է:

Տղան թագավորին ձեռքը պագեց, ձինը հեծավ, էրկու ճեյրան էր զարկեր, մեկը տվեց թագավորին:

- Որդի՛, ես չիմ կրնըր տանըր, շնորհակալ եմ, ծայր է, էկո տանիք, ղայվե մի խմե:

Էլան, թագավորին հետ ընկան ճանփա: Կես սահաթ տեղ գցին, տղան էջավ ձիուց ի վեար, ըսըց թագավորին. - Արքա՛ հայրիկ, հրամմե, հեծիր ձինը, ծեր ես:

Թագավորը չխըմըշաց օ հեծնըր:

Վեզիրը տեսավ թագավորն ու տղան, վազեց դեպի թագավորը: Տղան ճեյրանը տվեց վեզիրին ու հարցոց. - Վեզի՛ր, էաս ճանփան ո՞ւր կէրթա:

- Էաս ճանփան կէրթա ծովուն քնարը մեկ թեք ջաղացք կա:

- Տղա՛, դու քաղաք տ'երթըս, ջաղացք տ'երթըս՝ ի՞նչ տի ինիս:

- Իմ փնտռածս էալ ընի է:

- Կեցիր բարով, արքա՛ հայրիկ, - ըսըց ու ձեռքը պագեց: Թագավորն էալ էրեսը պագեց ու պաշլայեց տոլուխմիշ ըլլիլը, էալ լեզուն չդառնար օ ըսա թե «Այ որդի՛, ամեն օր էկո էաս չայիրը»:

Տղան գնըց, թագավորը կանչեց տղուն ետևեն. - Ի՞նչ ղտի կուգաս, էկո՛ ըս չայիրը:

Տղան հասավ ջաղացքը:

Իրկուն էղավ, թագավորը գնըց սուլթաններուն քով, ըսին. - Էդի ի՞նչ մարդ էր, չայիրը էկեր էր ծիով, դու էալ պատիվով ճանփեցիր:

- Էասօր մի տղա տեսա ես, էադ տղան թող իմը ըլլեր, իմ աչքս էալ քոռ ըլլեր:

Սուլթանները իրարու հետ խորհուրդ ըրին, կանչեցին պառապին:

- Դու էրկու չուճուխը ո՞ւր տարիր, նետեցիր:

- Ծովը նետեցի:

- Է՜, տղան մենծցեր է. էրեկ թագավորը տեսեր է: Չգիտեմ, տղան տ'էրթըս գընընը:

Պառապին փեշը լեցոցին օսկի:

Պառապն է, ընկավ ճանփա, գնըց հասավ ջաղացքը, օր մի աղջիկ նստեր է, աշխըրքին էրեսը չգտնվիր:

- Բարև քիզի, աղջի՛կս:

- Աստուծո բարին, մեա՛ր:

Էլավ մինտեր ցգեց տակը, պառապ նստավ, հարցոց. - Ի՞նր ունիս, որդի:

- Բան չունիմ, աղբեար մի ունիմ:

- Աղբեարդ ո՞ւր է գցեր:

- Ավղուշն է գցեր:

- Այ որդի, սև առիցը տակ՝ նստեր ես մինակ, նե բան կը բանիս, նե տիշլըղդ կա, էան կէրթա ավի հետ տիշլենմիշ կըլլի:

- Հըպա ես ի՞նչ տ'ինիմ:

- Աղբեարդ օ, էադ ղտի կըյրիճ տղա է, կը ճանփիս կէրթա Բըլել աղջկան մոտ, ծեռացը ղասնախը կը բերե, օր դու քերկեֆ բանիս, էղլենմիշ ըլլիս:

- Ի՞նչ դուր ճանփիմ աղբեարս էրթա:

- Օր էկավ՝ ծիուն եուլարը մի բռնըր, քեն ըրե, էան կը հարցընե՝ ո՞ւր կը ցավի, ըսա՝ տեղ չցավիր: «Հըպա ինչո՞ւ էսօր ծինը չիս բռնըր», - կըսե: Ըսա. «Դու կէրթըս ավի հետ էղլենմիշ կըլլիս»: Քիզի կըսա՝ հըպա ի՞նչ կըսիս: «Բըլել աղջկան քերկեֆը կուզիմ, օր էղլենմիշ ըլլիմ», - ըսա:

Տղան էկավ, աղջիկը պառապի ըսածին պես ըրըց:

Տղան ըսըց. - էլի, ծինը կապե, ըդի՞ է քու ուզածդ, ղասաֆեթ մի՛ ինիր:

Տղան առավոտը շուտ, խորոզը կանչելուն քիմի ընկավ ճանփա: Շատ գընըց, քիչ զընըց, էռսունըվիննը օր գնըց, ղոնախլուղը հեռուն էր. կես գիշերուն քաղաքը մտավ, ծիուն կեմը նետեց շնլին, ծինը խառնեց առաջ. ծինը գնըց մի պզտիկ դուռ կայնավ, էաս տունը մի պառապի էր:

- Բարև քիզի, մեարի՛կ:

- Աստուծո բարին, որդի՛:

Պառապը տեսավ օ շահզատե տղա է, ըսըց. - Ինչո՞ւ էտի ես մնացեր:

- Ըսանկ-ըսանկ պատահեցավ, - ըսըց տղան:

- Օլրվի՛ր տանը տակ:

Տղան ծիով էջավ տանը տակ, դուռը բացեց օ, էաս տանը ճոթ-ճոթեզեր չկա, պիթուն քեվկիր է, մզրախը չհասնիր. քաշեց, ծինը կապեց թավլան. նստան պառպուն հետ, պաշլայեցին զրուցիլ ու չպող քաշիլը:

Պառապը ըսըց. - Որդի՛, ո՞ւսկա գուգաս, ո՞ւր կէրթըս:

էկեր իմ, Բըլել աղջկան, տ'էրթըմ:

- Ա՛յ որդի, Բըլել աղջկան մոտ գցողը չկըրնըր գար, մեղք իս, չիմ թողիր օր էրթըս:

- Չէ, անկարելի է, տ'էրթըմ:

- Կէրթըս, էառջիդ էրկու լեառ կա. էադ էրկու լեառը կը բացվին ու կը խփուին քսանըչորս սահաթվա մեջ:

- Անկարելի է, տ'էրթըմ:

- Որդի՛, էադ լեառան էառջին իրեք սահաթ տեղ դեօր է, իրեք սահաթ կը քշես ծինդ, ծիուն սարդին թիզ մի ճերմակ փրփուր կը կապե. լեառը կը բացվի, ծիուդ գլոխը կօլրիս, մի զենկու կը զինիս ծիուդ զենկուստանը փորուն մեջ իրուր առնին, գցիր օ անցար լեառը. խորուն ծորու մի մեջ է Բըլել աղջկան սարայը. չորս դին լեառ քար է. մինակ էադ ճանփան է, էադ

ճանփով էալ մարդ չկրնըր էրթըր-գար: Կես սահաթ կը քշես, կը հասնիս մի աղբիր, ծիուն ի վեար կէջնըս. ջուրը էրկու տեղե կը վազե, մեկը թարախ կուգա, մեկալը էարին կը վազե: Կը խմիս թարախեն. «Աբուհայաթ կը լմանի մյուպարեքը», կըսիս: Կը խմիս էարինեն. «Էաս ինչ անուշ զեմզեմ-սուի է», կըսիս: Աղբիրը քիզի էալ բան չըսեր. ծինդ կը սեապես էադ աղբ-ին քով. կես սահաթ օտոք կէրթըս, էաոջիդ կուգա ծին մի, ասլան մի, ճանփուն վրա կապմուն ին վեարդին. ասլանին առաջ խոտ կա. ծիուն առաջ՝ ճանտակ կը փոխիս, ճանտակը կուտաս ասլանին, խոտը՝ ծիուն. կը հասնիս Բըլել աղջկան դուռը. էրկըթե թոխմախը դուռ ի վեար կախմուն է. կը զինիս թոխմըխով դռան. կը կանչիս՝ Բըլել աղջիկ, Բըլել աղջիկ. Կըսա՝ Լըպե: Դու կըսիս. «Լըպե ու խարնախըսի, էկո, բան տի ըսիմ քիզի ու տ'էրթըմ»: Դասնախը ձեառքն է, կուգա դուռը բանալու, կառնիս, կը փախնիս, էտիդ չես հայիր, կը հասնիս ծիուն, ասլանին քով: Բըլել աղջիկ «Ասլան, ըդի փարչրտե», կը պոռա: «Ինչո՞ւ տի փարչըտիմ, դու ինձի խոտ կուտայիր, էնի ինձի միս տվց», - կըսա ասլան: Էնի կը պոռա. «Ձի՛ն, էդի բռնե»: «Ինչո՞ւ տի բռնիմ, դու ինձի միս կուտայիր, էնի խոտ տվեց»: Կը հասնիս աղբիրը, էնի կը պոռա՝ էարի՛ն, բռնե: «Ինչո՞ւ տի բռնիմ», - կըսա, - «դու ինձի էարին կըսեիր, էնի ինձի զեմզեմ-սույի ըսըսց»: Կը պոռա. «Թարա՛խ, բռնե»: «Ինչո՞ւ տի բռնիմ, ապուհայաթ ինձի ըսըց», - կըսա: Կը հեծնիս ծինը, կինե էան լմանը կանցնիս լեառն օ բացվավ:

Առավոտը պառապը ճանփու դրեց. պառապին տվեց քսան օսկի, առավ քիրայով ձի մի, պառապը էլավ հեծավ, ընկավ տղի առանջ. քանի լեառը չէր էրևար՝ կէրթըր, լեառն օ էրևաց, պառապը էջավ, տղան չպողը լեցոց, չախմախը զարկեց, տվեց պառապին, քաշեց:

Պառապը ըսըց. - Որդի՛, տե՛ս, լեառն օ իրուր կը զինե, հինգ սահաթ ձեանը կէրթա, որդի՛, մ'էրթըր, կը մնըս մեջը, կը կորսվիս:

Տղան փուսուլան հայավ, պառապը ինչ չեշիտ կըսա՝ տահա շատ է, սիրտը դողաց:

Պառապը ըսըց. - Տղա՛ս, հայի՛ր, ինչ սարսափելի է, մ'էրթըր:

- Չէ, տ'էրթըմ:

- էրթըս բարով: Ձիուդ պոչը կապե. օ լեառ, խփվելուն, մեջը չմնա (ծիուն պոչը հայիլը էդկա է մնացեր):

Շատ քիչ գնըց, հասավ լեառը, ծիուն գլոխը օլրեց, իրեք սահաթ խաղցոց, թիզ մի փրփուր կապեց ծինը, լեառը բացվավ, զենկյուն զար-կեց, քշեց ծինը, անցավ: Լեառը խփուավ, ծիուն պոչը մնաց արան, էջավ օ ծիուն պոչը կըյրե, ծինը հոտի զրուցեց. - Եոթը տարի է շալակս առիր եմ

կօլոցընիմ, շնլիս զինեիր, չէ թե պոչս կըյրեիր, պառապին մտիկ չէրիր, էան ծովի միջու պառապ էր, ամեն բան գիննար:

Կտրեց պոչը, հասավ աղբիրը, ծինը սեապեց, դուռը էան լըման զարկեց. - Բըլե՛լ աղջիկ, Բըլե՛լ աղջիկ:

Էկավ ան լըմանը ըսըց:

Ղասնախը առավ փախավ, բերըց, էան լման անցավ լեառան մեջեն, էջավ պառապի տունը: Դուռը զարկեց, պառապը շնլին գրկեց, էրեսը պագեց, տղան էալ ձեռքը պագեց, ձին կապեցին, նստան պառապին հետ խոսալը:

- Որդի՛, - ըսըց պառապը, - չըլլի օ հե մ'էլ գաս, ուրուշ տեղ կէրթըս՝ գնա, իմ քով գաս, քեզ թագավորին գանգատ կինիմ, հապս ինիլ կուտամ*:

Տղան տարավ զասնախը ինք իր տունը:

*

* *

Գանք թագավորին:

Իրեք ամիս է, թագավորը հիվնդցեր է, տղին կսկծուն պեքճի է դրեր, միշտ գիշեր-ցերեկ չայիրը կը հային, օ տղան գա:

Տղան իրկունը էկավ, առավոտը ձինը հեծավ, գնըց ավը, մտքով ըսըց. «Ձինս շատ է խոնջցեր, էրթըմ թագավորին չայիրը»:

Զարկեց մի կեյիկ, մի ճեյրան, էջավ չայիրը, մզրախը տնկեց, շուքը պարկավ:

Խապար տվին թագավորին, թագավորը օտաց ամանն ալ չհագավ, էանանկ բըճով գնըց տղին էրեսը պագեց, գլխուն վերդին նստավ:

- Վեզի՛ր, ղայվեն ղուրմիշ ըրե:

Տղան արթըցավ, բերին ղայվե:

- Ա՛յ որդի, իրեք ամիս է էաս ո՞ւր ես, ո՞ւր գընցիր, ի՞նչ կը բանեիր:

- Տունս փլեր էր, կը շինեի:

Թագավորն օ տղին խոսալը լսեց, սըպ-սաղ էղավ:

Տղան կեյիկը տվեց թագավորին, ձինը քաշեց թագավորին տակ, հեծոց, ընկան ճանփա, էկան սարային տակ:

- Որդի՛, հայտե ըս իրկուն էրթըք ղոնախ, իմ մսաֆրըս ես:

---

* Կը վախցնե որ չգա (ծ.ա.):

- Թագավո՛ր ապրած, շնորհակալ իմ, չըլլիր, քորս իմ ճանփաս կը հայի:

Գըցին իրանց տեղը:

Թագավորը գնըց տուն, խարա-փալուտի հաստ փեատ մի կըյրեց, ընկավ էաս էրկու քրոջ վրա, պաշլայեց գինիլը:

- Դո՛ւք էիք, օ մեկդ չադր տի գործեիք, մեկդ՝ խալի, էսօր ես մի տղա տեսա, մի օտքս չըլլեր, մի աչքս քոռնար, էան տղան իմնը ըլլեր:

Մուլթանները կանչեցին պառապին. - էան տղան կինե էկեր է, ո՞ւր ճանփեցիր:

- Բըլել աղջկան ճանփեցի:

- Թագավորը էան տղին համար մեր աչքը, գլոխը կոյրեց:

Պառապը ձեառքը էտին կապեց, ընկավ ճանփա, գնըց ջաղացքը: Բարև տվեց աղջկան, բարևը առավ:

- Հա՛, հա՛, հա՛, - ըսըց պառապը, - տեսա՞ր, որդի, դու էալ աղկեկ, ղասնախն էալ աղկեկ, էյլենմիշ էալ կըլլիս: Մի բան պակաս է:

- Ի՞նչ է պակաս, մեարինկ:

- Ըս ղասնախին ասեղը հետը տի բերեր, չբերեր: Ճանփե, էրթա բերե:

Տղան իրկունը էկավ տունը. աղջիկը ղասնախը էդիր դենը, չգնըց ձինը բռնիլը:

- Այ քոր, էկո ձինը քաշե:

- Ի՞նչ տի ինիմ, ինդուր կը հեծնաս, էանանկ քաշե, գըցիր ղասնախ մի բերիր տե՝ ասեղը հետը չբերիր:

- Կէրթըմ, կը բերիմ:

Առավոտնը տղան ընկավ ճանփա, էան լմանը գնըց. պառապի տունը չգնըց վախուն:

Գնըց էան լմանը Բըլել աղջկան ձեառքեն ասեղը փախոց, առավ էկավ, տվեց քրոջը:

էան լմանը ավլա ավը գնըց. ավլա չայիրը, ավլա թագավորը ծեծեց սուլթաններուն: Պառապը ավլա գնըց աղջկան քով. «Փեհ, փեհ, փեհ, աղջի՛կս, տեսա՞ր, դու էալ աղկեկ, ղասնախն էալ աղկեկ, ասեղն էալ աղկեկ, ի՞նչ ինիմ օ ըսոր վարպետը բերեր. ճանփե, թող էրթա վարպետն էալ բերե, օր հեմ իրարու հետ ըսիք ու խնդաք»:

Տղան էան լմանը էկավ ավեն, էան լմանը քեն էրավ աղջիկը, տղան էան լմանը գնըց, պառպուն տունը չգնըց. էան լմանը լեառեն ընցավ գնըց, կայնավ Բըլել աղջկան քեմեր-ղափուի վրան, օ քարերը քուլլի օսկի է, զարկած թոխմախն էալ քուլլի օսկի էր:

Կանչեց. - Բլլե՛լ աղջիկ, Բլլե՛լ աղջիկ:

- Լըպե՞:

- Մի սահաթ առաջ էկո, բան կըսիմ:

- Ահա, սպասե կես սահաթ:

Մաննին մատը չէր, անցոց մատը, էլավ քեմեր-ղափուին գըլոխը, հայավ դեպի տղան. - Դո՞ւ ես, օ իմ ղասնախնը, ասեղը տարիր:

Մաննին բարսըցոց, լիզեց, ըսըց. - Թաք օտքն քար կըյրես:

Հե մ'էլ լիզեց. - Անգին մաննիս. ամեն տեղ քար կըյրես, բերանը, աչքը, քիթը բաց թողես, մե մ'էլ մի ականջը լսե:

Տղան կայնուկ տեղը քար կըյրավ, մնըց:

Բլլել աղջկան բյուր-բյուր հազար մարդիկներ՝ էրթողը պիթուն քար կըյրվեր, էատանկ կայներ է. մի մարդ է մնացեր, օ էատանկ թեքմիլ ըլլի:

Հրեղեն ձինը պաշլայեց լացը. լեառը բացվավ, ընկավ ճանփա հերսեն:

- Հասնելուն քիմին տի փարչատիմ աղջկան, ըսըց. քառսուն ավուր ճանապարհը մի սահաթը գնըց, զաթի տունը խարապա էր, էղավ խարապա ըսըց:

Աղջկան օ տեսավ, աղկեկութան չխըմըշավ. մի մոր միներ էին տղուն հետ. ըսըց ձինը. - Մի լման էին. չէ նե ճանփուն հերսս ըլլիր, տի սպանեի. բերանս չբացվիր, օտքս չէլլիր:

Աղջիկը առավոտը էլավ, մազը թոփեց, աղբորը խըլլըրը մտավ:

Ձինը ըսըց. - Ձարկ այարս, քաշե խոլանս, ժիր էլիր, հեծիր:

Հեծավ, էլավ ընկավ ճանփա, գըցին պառապի տունը էջան, դուռը բացեց:

- Որդի՛, դու բարի՞ ես էկեր, չարի՞ ես էկեր:

Աղջիկը կը մտածե. «Աղբեարս հոսի էկեր է, օ ձին ըստեղ էկավ»:

Պառապը առանց աղջկան հետ խոսալու, բյուլբյուլի թյույով եաթախ էր շիներ տղին համար, օսկի թելով քաշեր էր վրան, բերըց ցգեց տղին տակ*:

Աղջիկը մտածեց. «Աղբեարս էաս եաթախին մեջ պարկեր է»:

Առավոտը էլավ:

- Մեարի՛կ, տ'էրթըմ:

- Ո՞ւր տ'էրթըս:

- Բլլել աղջկան տ'էրթըմ:

---

* Աղջիկն էր տղի կերպարանքը, պառապը կարծեց տղան է (ծ.ա.):

- Որդի՛, մ'ինիր, մ'էրթըր, գցիր, էկար՝ սորվար: Բյուր-բյուր մարդ գցեր, քար է կըյրեր, էրկու մարդ է մնացեր, օր թմի բյուր-բյուր մարդը:

- Մե մ'էալ ես տ'էրթըմ, թող քար կըյրվիմ:

Հեծավ ծինը, քշեց. պառապը պաշլայեց լացը ու ինքզինք գետինը զինիլը:

Շատ կենկեգցավ պառապը, աղջիկը մտիկ չըրըց, թողեց գնըց, հասավ էան լեառն:

Ձինը խոսաց. - էլի, պոչս կապե, էրկնցեր է պոչս:

Պոչը վլաց, կապեց:

Ձին ըսըց. - Ինձիս կը խաղցնես, թիզ մի փրփուր օ կը կապե վրաս, լեառան բացվելուն քիմի էանանկ զենկու մի կը զինիս՝ օ զենկուստանը փորիս մեջ իրուր առնին:

Գնըց հասավ աղբիրը:

Ձինը ըսըց. - էջի՛ր վրուս:

Էջավ, աղբորը պես էան լմանը վլացվավ, էան լմանը գնըց:

Ձինը ըսըց. - Դուռը հասնելուն քիմի իրեք հեղ զարկ, անտա կանչե, ըսա. «Բըլել աղջիկ, Բըլել աղջիկ»: Էնի կըսա. «Լըպե՞»: Դու ըսա. «Լըպեն փորդ մնա, մի սահաթ առաջ էկո, ես տ'էրթըմ»: Էնի ղասնախը ծեառք բռնելեն կուգա, դուռն օր տի բանա՝ չոլախ թևդ՝ կը պըլլես*, աջուկ թևվդ կը պաշլայիս զինիլը, էնոր մաննին փենճերեն է, կը զինիս, կըսիս. «Ձգիտեմ, աղբեարս տի հանիս, չէ նե՝ քեզ կը մորթեմ»: Բըլել աղջիկ կըսը. «Թող, օ էրթըմ մաննիս առնեմ օ աղբեարդ հանեմ»: Թող չտաս, դու ծեռքդ կառնես, էխտրպար մ'ինիր, մաննին լիզե ու ըսա. «Մուրազ մաննիս, աղբորս թաք օտին քարը թափիս»: Հե մ'էլ լիզե. «Մուրազ մաննիս, ըսա, աղբեարս հանիս»: Աղբեարդ էլավ նա՝ մաննին կուտաս աղբորդ:

- Դե, գնա, - ըսըց ծինը, - ես քիզի կը հասնիմ երբ ըլլի:

Աղջիկը էան լմանը գնըց հասավ դուռը, զարկեց իրեք հեղ, կանչեց. - Բըլել աղջիկ, Բըլել աղջիկ:

Էան լմանը ըսըց, էան լմանը բռնեց, ծեծեց, մաննին առավ, լիզեց, աղբեարը հանեց, մաննին տվեց աղբորը:

Ձինը շատ քեֆոտավ, հըռհըռալեն էկավ, աշխարք իրան նոր տվին:

Բըլել աղջիկ ըսըց. - Թեքմիլ էղավ, փնտռեցի գտա:

Տղան՝ աղջկան, աղջիկը՝ տղին թևեն բռնեց, առավ էկավ օսկի օդան:

---

* Էնոր մազերը գետինը բըսնելեն կուգա (ծ.ա.):

Էաս աղջիկը 240 խալայեղ ուներ, ղայվե բերին, կերան խմեցին: Տղեն ձեառքը բռնեց, գնը աշխանան, քառսուն պղինձ դրմուն է, կերակուր կէփեն, էադ քարե մարդոցը համար:

Էնոք քար կըյրած ին, ամմա կերակուր կուտին, բերան ի վեար կերակուր կը լեցնեն, բերաննին բաց էր:

Տղան մաննին լիզեց, ինչ օ բյուր-բյուր հազար մարդ կար նե՝ թափեց քարերը, էլան աշքեարա:

Հրաման ըրը, քաշեցին կերակուրնին էադ մարդոցը:

Բըլել աղջիկ հոտ զրուցեց. «Քոռանա աչքս, օ դու բյուր հազար մարդոց գլոխ ես էղեր, ես քիզի քար դարձուցի. ավուր առաջ էրեսդ տեսած էի, քար չէի կրյրեր, դու իմ սրտի ուզածն իս էղեր»:

Էլան էան մարդիկը ճանփու դրին. հերքեշ գըցին իրանց տեղերը:

Մնացին քոր, աղբեար ու Բըլել աղջիկ, հարիր քառսուն խալայեղ ու խզմեթճիք:

Վեց ավուր էտև զրուցեց տղան. - Բըլել աղջիկ, թետարիքդ տես, օ տի էրթըք:

- Թագավորի տղա՛, ո՞ւր տ'էրթըք, հոսի կենաք*, օսկի ուզիս շատ է, ես էալ քիզի պես մարդ կը փնտռեի. Աստված քիզի իմ ճակատը գրեր էր, կեցիր հոսի:

- Բըլել աղջիկ, դու բան մի ըսիր ինձի, էնի ի՞նչ էր ըսիր:

- «Թագավորի տղա» ըսի:

- Ես թագավորի տղա չիմ:

- Հըպա վե՞ր տղա ես:

- Չաղցպընի տղան իմ, էաս իմ քորն է:

- էադ աղբերարդ չէ՞:

- Քորս է. էաս քորս էր, օ էկա էսոր համար դասնախը տարա, քար կըյրվա:

- Դու թագավորի տղա ես:

- Ես ջաղացքը մենծցեր իմ. պապս, մեարս ծերունի մարդ էին, մեռան:

- Աորա իմաց կըլլիս, թագավորի տղա՛: Կըյրիճ տղու նեվսանիյեթ կա իմ քով:

- Կըյրիճ չըլլեիր, էաս ղտար մարդը քար չէիր կըյրեր:

- Բյուր հազար մարդու գլոխը էղար դու:

---

* Աղջիկն ոեմ նետած էր, գինար թագավորի տղա ըլլիւը (ծ.ա.):

էլավ Բըլել աղջիկ իրան սարայը թեսլիմ ըրըց ծառանուն, իրանք մեկ-մեկ ձի հեծան, ընկան ճանփա, գընցին ջաղացք:

Բըլել աղջիկ ըսըց տղին. - Դու թագավորի տղա ես, քու մեարդ նալլեթլեմե է ըրած:

- Իմ ծնըղած տեղը ըսի է, էաս ինձի պիննա:

- Թագավորի տղա՛, բեր պոյդ չափիմ:

Չափեց, քաշեց տղին սուրաթը, տվեց տղին ձեառքը:

- Մաննին լիզե, - ըսըց, - ինչ ղտի օսկի ուզիս, կը բերե: էադ օսկեստանը կը լեցընես խուրճինը, կը նետես ձիուն թերքին, կընիս ճանփա. կէրթըս Ուլի քաղաքը օր ճոթ-ճոթեզեր չունի. օր հասնիս քաղքին օրթալախ տեղը, չարշուն, մզրաղդ կը զինիս, պատկերքը վրան կանցընես. դալալին կուտաս խուրճին մի օսկի, կանչել կուտաս տասնըհինգ տարվա տղա ես. «Քառսուն հատ տասնհինգ տարվա տղա պետք է ինձի էաս լըմանը, էաս պոյը»: Ամենքուն էալ հարիր-հարիր օսկի կուտաս:

Տղան էան լմանը ըրըց, հազար հատ տղա էկան, ուրնը չափեց՝ հազարեն հինգ հատ էան լմանը հանեց սուրաթն չվանի պոյը: Իրեք տարի կեցավ, քառսուն տղա լմանը՝ լմանին, պոյը՝ պոյին բերեց: Ինք ինչ էր հագեր, տղոցը էն չեշիտը հագոց. ինչ չեշիտ ձին հեծեր էր, տղոցը էան լմանը հեծոց, մեկ-մեկ ղալխան, մեկ-մեկ թուր, մեկ-մեկ ղարղը առավ:

էլան հեծան տղաքը, թապուր-թապուր ետ մնացին, ինք առաջ կուգա. հեր վեվ օ կը տեսնա, գլխուն խելքը կէրթա, զարմանք կը մնա. «Չուտիմ, չխմիմ, գիշեր ցերեկ էսոց թամաշա ինիմ»:

էլան էկան ջաղացը, ձիանուն վեար էջան, ջաղցին առաջ մի սահաթ էրկեան, լեան չայիր կա, ամմա շոռ է, չայիրը չէր կընիար:

Ըստեղ էրկըթե ցից զարկեցին, թապուր-թապուր կապեցին ձիանը: Բըլել աղջիկ մերդե շերպեթով դայվեն բերեց, քորը աթոռքը քշեց աղբորը տակ: Բըլել աղջիկ տվեց դայվե թագավորի տղին. էաս քառսուն էալ ձեառք կապեցին, կայնան տղի առաջ: Բըլել աղջիկը հայավ ու հայավ տղոցը, սիրուրուտեր* մնըց, ըսըց տղին. - Թագավորի տղա՛, էդոց քսանը՝ առջիդ, քսանը էտիդ կը ցգես, կէրթըս ավի, կէջնաս չայիրը կինե, չայիրին արևցթունթին տասնըեոթը չեշիտ վարդ կա, ամեն վարդի վրան էրկու-էրկու բյուլբյուլ կա, արու էգ են. կառնիս, ամեն չեշիտեն մի հատ կը բռցընիս դու քու քեռոքդ, էաս վարդ ծախողի տղան էալ մենե կինիս, տեստե կապել կուտաս, դու էրկու տեստե կառնիս, տղաքն էալ մեկ-մեկ.

---

* Բախլեցավ, գրավվեցավ (ծ.ա.):

թագավորը, վեզիրը ու նազիրը կէլլըն, կուգան ձիզի տեսնալ, չըլլի՛ օ դու քնանաս, էվել ինչ տեղ օ կը նստեիր նե՝ կինե նստիր:

- Ինչո՞ւ, Բըլե՛լ աղջիկ:

- Թագավորը կը տեսնա, զարմացք կը մնա, զորք կը հանե վրադ, օ ձիզի ջարդին:

էադ խրատը առավ էլավ, գըցին ավի, էկան էջան չայիրը: Վեց օրով չէ քնացած տղաքը, էկան սեապեցին չայիրը: Տղան մըզրախը էվելքու տեղը զարկեց. մեկալ տղաքը՝ հերքեշ իրան մզրախը զարկին, տակը պարկան:

Թագավորը ըդ ժամանակ պարկավ, քուն կըլլի, տղաքը քներնին առին, էլան գըցին տեսան օ, Բըլել աղջիկը ինչ դուր օ կըսա, էան լման է. ամեկն էալ վարդ առին, բյուլբյուլները բռնեցին, ղաֆես ցգեցին, վարդի տեստեն էալ ղաֆես ցգեցին, դրին սրային թապուր-թապուր աղբրի վրա: Տղան նստավ բյուլբյուլներուն գլոխը, բյուլբյուլնին էալ մեկ դիու կը կարկնչեն:

Թագավորը էլավ տեսավ, օ չայիրը մզրախ-մզրախի տայանմիշ է էղեր, մզրախնուն գլոխն էալ ալ, եշիլ, կանաչ, կապոտ է:

էաս օ տեսավ, բերնեն էլավ թագավորին. «Խապար մի, չէ նա՝ զարկեք»:

Նազիրը հասավ չայիրը, տեսավ տղան, օլրվավ ետ, խապար տվեց՝ թե ըն տղան է:

Վեզիրնը, նազիրը ու թագավորը, իրեքը մեկտեղ էլան գըցին. էրկու սահաթ նստան, խոնուշմիշ էղան, էլան հասան չաթ ճանփան, գնըց տղան թագավորի ձեառքը:

- Կեցիր բարով, հեարին՝:

- Այ որդի՛, ըսի ղտի ժամանակ կէրթըս, կուգաս, էաս օր էկո մեր, մե լեղի ղայվեն խմե, գնա:

էսոք թագավորին հետ գըցին, հասան մորը քով, ձիանուն վեար էջան, էվել իրանք - վեզիրը, նազիրը ու թագավորը մեկ-մեկ թոխմախ զարկին, ընցան: «Թագավորի խափող մարդուն հալը ըսի է», - ըսին:

Մեարն էալ ամեն զարկողին «Աստված կա» կըսեր:

Տղի քառսուն խզմեթքեարն էալ վարդով զարկին, ընցան:

Սրան էկավ, տղան էալ վարդով զարկեց, ձգեց մորը առաջ:

Մեարնը ըսըց. - Աշխարքը թոխմախով կը զինե՝ չցավիր, դու կյուլով զարկիր, ճիկերս ծակեց ընցավ:

- Ժամանակը լեցեր է, մեարիկ, - ըսըց:

Անցան գըցին ներս, դայվեն խմեցին, էլան հեծան ձիանը, ընկան գըցին իրանց տեղը: Իրեք օր մնացին, Բըլել աղջիկը ըսըց. - Թագավորի տղա՛, իմացա՞ր:

- Իմացա, - ըսըց տղան:

- Չորս հատ խզմեթքեար կը ճանփիս, թագավորին դավեթ կինիս:

Չորս հատ էկան թագավորին գլոխ տվին, հանեցին թուղթը տվին, ինչ օ ժողովուրդ կա, ինչ ղտի օ ասկեր, ագպա կա ամենը կը ժողվես, կուգաս:

Թագավորը վեզիրին ըսըց. - Գրե ինք պիտի գա, գըցեք թող ինք գա:

էլան գըցին. թուղթը տվին տղին. տղան քառսուն խզմեթքեարն էալ առավ, գնըց: Չըգըցած տան մաննին հոտ տվեց Բըլել աղջկան*:

Բըլել աղջիկը ըսըց. - Գնա՛, թեզ էկեք, ես պատրաստ կը տեսնըմ:

Բըլել աղջիկը պաշլայեց մաննուն հետ խոսութին ըրըց. լիզեց. - Մուրազ մաննիս, էանանկ մեկ քիլիմ մի չայիրին վրա փռես օ, օսկի թելով, ինչ օ թագավորի մարդ կա՝ նստի, մեկ դին էալ պարապ մնա:

Թագավորը իրան ագպայը առավ, էալ մարդ չթողեց, առավ էկավ, խորխոր նստան:

Թագավորն ու ռղան էալ Բըլել աղջկան չադրըրը:

Թագավորը հայավ դեպի իրան աղջիկը, գլխուն խելքը գնըց, աչքը մթնըտեց, մտոքը ըսըց. «Ըս աղջիյնը, տղան, մեկ էալ էաս հարսը իմը ըլլիր, էրկու ոտքս էալ չըլլիր»:

Վեզիրնը ըսըց. - Ըս տղան խենթ-ախմախ է, ըս ղտի մարդը նստեր է, նե պղինձ կա դրմուն**, նե կրակ, էաս՝ ըսել կուզե մեր վրա կը խնդա:

Բըլել աղջիկը հրաման ըրըց իրան խզմեթքեարներուն. - Չադրը հոտա խուրմիշ ըրեք:

Ըրին:

- Տղա՛ք, գըցեք մարդիկը սրա դրեք, օ կերակուրը քաշիք:

Տղաքը ճանփեց, ինք մաննու հետ զրուցեց. լիզեց մաննին. - Մուրա՛զ մաննիս, օսկիե ամաև, օսկիե դգալ, օսկիեն մեկ-մեկ ջրի թաս:

Հազր էղավ, պատրաստ տեսնվավ:

Տղաք քաշեցին կերակուրը, կերան կշտացան:

Տղան գընըց վրանին ըսըց. - Հերքեշ իրան դգալը, իրան առջևու թախումը թող առնե, իրան հետիյե ըլլի:

---

* Տե հիմա էխթիպար չէր ըներ (ծ.ա.):

** Դրած կրակի վրա (ծ.ա.):

Առին էլան:

Պոռին փչվավ, ասկերը քաշվավ, վեզիրնը, թագավորը իրուր հետ խոսութին ըրին. - Տե, էս ղտի փեշկեշ շատ բան է, թագավոր ապրած, ապա մենք օ տավեթ ինիք, ի՞նչ տի տանք, օ էսոր տակեն էլլը, էաս անհաշիվ բան էղավ:

Վեզիրին տվեց ալմաստե թաս մի, թագավորին տուեց անգին քարե թաս մի: Տղան ըսըց. - Արքա հեարի՛կ, նոր տուն կըլլիք, քիչերնիս շատ համարե:

Թագավորին խելքը տաղըլմիշ եղավ, վեզիրին խելքը ղիվանեեն էլավ: Տե՛ կես ճանփան՝ ճանփեցին, դարձան էկան: Էնոք էալ գըցին իրանց տեղը նստան:

Հրամայեց թագավորը վեզիրին, վեզիրը լալային, գնդլիկ գլոխնին, չեփիճ դաչ ... տոլմա եուտանլար, թոփվան էկան թագավորի քով, խելոք մարդիկ նստան մեճլիս ըրին. - Էտոք տահա նոր տուն տի ըլլին սէ՝ միգի էան տղան էասքան փեշկեշ տուեց, ըսըց. «քիչս շատ համարեցեք»:

Թագավորը ճանփեց. - Գըցեք, ագպայով առեք էկեք տղին:

Տղով քառսունըմեկ հոգի էլան գըցին: Տղան վեր տեղ օ աթոռի վրա նստեր՝ քառսուն էալ ձեառք կը կապեին, կը նստեին: Աշխրքի ճոթեն մարդ չմնըց, թափվան էկան տեսութին ու զարմացք մնացին խզմեթքեարնուն վրա. մի պոյին, հագվածնին մի է, մի սուրաթին:

Ձիանու եմին վախթն էկավ. թագավորի անպարը բացվավ, եմը գնըց ձիանուն: Կանչեցին քառսուն խզմեթքեարնուն. օ էնոց էալ ձիանուն եմը տան: Խզմեթքեարնուն մեկը հարցոց թագավորի ղոլաղասուն. - Ըսի ի՞նչ է:

- Գարի է:

- Մեր ձիանը գարի չին ուտեր:

- Հըպի ի՞նչ կուտեն:

- Մերճան կը կըյրեն:

- Ախալ ես, ձիանը գարի կուտեն:

Մե մը էնի, մե մը էնի, «հա» «չէ» ըսին. կռիվ մը հանեցին, իրարու զարկին, գարին զարկեց թափեց, ցանեց ըն տեղանը, էլան վեր՝ պեկին քովը:

- Ձիանուն գարի տվի՞ր, - կը հարցնե վեզիրը:

- Մեր ձիանը գարի չեն կըյրեր, - ըսըց խզմեթքեարը:

- Հըպա ի՞նչ կը կըյրեն:

- Մերճան կը կըյրեն:

Թագավորը հայավ տղին երեսը, ըսըց. - Իրա՞վ ծեր ծիանը մերճան կը կըյրեն, օ էասքան ղալմաղալըխ էղած է:

- Հա, մեր ծիանը մերճան կը կըյրեն, - ըսըց թագավորի տղան:

- Չէ՛, այ որդի՛, հեչ կարելի է, ծին մերճան կըյրե, խելքդ թռուցի՞ր, որդի՛ս, էադանկ բան չըլլիր:

- Լսեցե՛ք, մեճլիսի մարդի՛կ, կնիկ-մարդը օ շան լակոտ կը բերե, մեր ծիանը ինչո՞ւ մերճան չկըյրեր:

Մեճլիսի մարդիկը հախ տվին տղի խոսութինին, ըսին. - Օ կնիկը շան լալոտ բերե, ծիանն էալ մերճան կուտեն, - ցունց տուր, ո՞ւր է:

- Տե, ահա թագավորի քեմեր-ղափուի վրա է: Լսեցե՛ք, մեճլիսի մարդի՛կ. էադ սուլթանը ինչ մեղավոր է, էրկնուց թըռչունն էալ իրան նգուլով կը գինե կանցնի. կիրիրան էալ կուգա կոչով կը գինե կանցնի. օձն էալ պոչով չարփմիշ կինե կանցնի. աղվեսը վրուն կանցնի, արջը վրան կը ցռե կանցնի, գեալը ճուռը կը խածնե կանցնի, օզնեկը փուշը կոխե կանցնի, մրչումը տրեմ մի միս կառնե կանցնի, բղեզը քաքը կը գըլտըրե, կը բերե քնթին առաջ կանցնի, ճանճը կուգա աչքը կուտե, մրժեղը կը մննա, աչքը կավրե, կը թողե կէրթա. տրզուկը կը մըննա պողազը, էարինը կը խմե, կանցնի կէրթա. կորչը մանները խածնե կերթա, որդը կը մննա եարին մեջ, կուտե, կէլլե կէրթա: Լսեցեք՛, մեճլիսի մարդի՛կ, լավ դատ կըյրեցեք:

Բոլոր աշխրքի մարդիկ իմացան, օ ըս տղան սուլթանի տղան էր, սուլթան անմեղ էր:

Թագավորը իմացավ, հրամայեց:

Առին սուլթանը տարին համամը, լոքցուցին, հագոցին, բերին սարային մեջ նստեցուցին:

Հրաման ըրըց թագավորը. - Գցեք բերեք աղջիկս ու Բըլել աղջիկը:

Տղան ըսըց. - Չիմ հավատար օ քու մարդ էրթա, առնե բերե, հավատարիմ մարդ չկա:

- Օ չես հավատար, որդի՛, քու մարդ ճանփե, օ առնե բերե:

Տղան ճանփեց իրան քառսուն հավատարիմ խգմեթքեարը, գըցին, առին էկան սարայը. օ հասան սարայը՝ Բըլել աղջիկը կայնավ քեմեր-ղափուն, ներս չգնըց:

Թագավորը էկավ քեմեր-ղափուի վրա, զրուցեց:

- Աղջի՛կս, ինչո՞ւ ներս չիս իգար:

- Ըս սարայեդ կէլլըս նե՝ կուգամ:

Էջան պապ ու տղա. գըցին էան չայիրին աղբրին վրա. Բըլել աղջիկն հանեց մաննին, լիզեց. «Մուրազ մաննիս, ըս աղբրին վրա էանանկ սարայ մի կը նստըցընես, օ աշխրքի վրա չգտնվի»:

Էկավ սարայը տեղը կայնավ:

Մտան քոշք ու սարայի մեջ. թագավորը շատ ուրախութին ըրըց, նոր աշխարք էկավ, պատրաստ տեսավ, մենծ հեարսնիք ըրըց, պսակեց տղան:

Էնոք հասան իրանց մուրազին... :